եւ ի նախատինս մեր այս կարգի օրինակներ քիչ չեն մեր կեանքի մէջ, ահա եւ մի ուրիշը»։ Այս իրողութիւնը «Недѣл.» է տպուած։

«Սարսափելի վիճակի մէջ եմ, գրում է մի այրի՝ ժողով. դպրոցների տեսչին. վեց երեխայ ունեմ, ես էլ հիւանդ, անընդունակ որ եւ է աշխատանքի։ Ամուսինս 18 տարի ծառայել է ղէմստվոյի դպրոցներում եւ երկու տարի էլ՝ պետական. եթէ առաջուայ ծառայութիւնը չհաշուէք եւ ինձ մի շնչին նպաստ չհասնի՝ չգիտեմ ի՞նչ պիտի անեմ։ ամուսինս մի տարի հիւանդ էր եւ մեռաւ սրտի ցաւից։ Բժշկի ասելով այդ հիւանդութիւնը ստացել էր ծանր աշխատանքից եւ վատ բնակարանից։ Երբեմն ստիպուած էր անպիսի ցուրտ տեղերում մնալ, որ ջուրը սառչում էր։ Նորան տեղափոխում էին շատ շուտ շուտ իւր կամքին հակառակ, զանազան դպրոցներ կարգի բերելու համար (նա լաւ ուսուցչի համբաւ էր վայելում)։ Ամուսինս զայրանում էր, յուզուում, բայց թողնել ուսուցչութիւնը՝ չէր կարող։ Նորա թաղման համար մի կոպէկ անգամ չտուին. այժմ ինձ օգնում են գիւղակ. ուսուցիչներ»։ — Ինչո՞ւ աշխարհի բանը այնպէս է, որ միայն քաղցածը քաղցածին օգնութեան ձեռք է մեկնում։ բացագանչում է այս իրողութիւնները հաղորդողը։

ԾԱՆՐ ՎԻՃԱԿ.

Հնայած գիւղ. ուսուցչի ջանքերին, որ լոյս է տարածում խաւարի մէջ ոչ միայն նորա մահուանից յետոյ դառն է նորա ընտանիքի դրութիւնը, այլ նոյն իսկ իւր կենդանութեան ժամանակ շատ դառնութիւններ պատրաստ են նորա համար։ Смол. Вѣст. պատմում է, որ Бѣлс. գաւառում մի նորաւարտ ուսուցիչ իւր հոմեստ, հեզ եւ ջանասէր բնաւորութեամբ մի անգամից գրաւել էր նոյն գիւղի ժողովրդի ինչպէս եւ մերձակայ կալուածատիրոջ սիրտը։ Բայց մի ինչ որ պատճառով դուր չէր եկել գիւղի տանուտէրին։ Այս հանգամանքը բանը այնտեղ հասցրեց, որ շնայած բազմաթիւ համակրողների միջամտութեան եւ ինդիրքին՝ մի քանի ամիս ուսուցիչը չստացաւ իւր ամսականը (10 բուբլի), եւ սովից կրմեռներ, եթէ մի բարեսիրտ մարդ իւր մօտ չպահէր նորան։ Բայց հալածանքը դրանով չվերջացաւ. տանուտէրից խրատուած ծառան երբեմն վառարանը չվառած էր փակում, երբեմն օրերով չէր վառում, կամ նաւթ չէր տալիս։ Ցուսահատած ուսուցիչը թողեց եւ հեռացաւ ի վերջոյ։

ՆԵԱՆԱՒՈՐ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ.

„Волгарь“ թերթի աշխատակիցը Արդատովի գաւառից ուղարկում է մի նշանաւոր պայմանագիր. մենք ի ներքոյ ստորագրեալ Կ.-գիւղի դպրոցի աշակերտներս այսու պարտաւորուում ենք պահել հետեւեալ կարգերը։ 1) Դասի ժամանակ դասարանից դուրս չգալ, չխօսել, չկանչտել, չը կռուել, ոչ դպրոցական իրեր չբերել ներս եւ նրանցով չխաղալ։ 2) Ամէն տօն օր եկեղեցի գնալ. այնտեղ չխօսել, շաբութիւն չանել, կարգով կանգնել։ Եթէ այս կարգերը չպահենք պարտաւորուում ենք կրելու հետեւեալ պատիժները։

1) Ամէն մի աշակերտ երեք բոունց տայ յանցաւորի մէջքին (աշակերտ 48 հատ. ուրեմն 3 × 48 = 144 բոունց)։ 2) Խօսողը չոքի մինչեւ դասի վերջը։ 3) Դուրս ելողը տեղը չպիտի նստի. 4) Աղմուկ անողը դուրս գնայ դասարանից. 5) Խաղացողը՝ չոքի. 6) Եկեղեցի չգնացողը՝ ամբողջ օրը չոքի. 7) Հայհոյողը առանց հացի մնայ 8) Դասին բան ուտողը՝ նոյն պատիժը կրի։ Որ եւ ստորագրում ենք։ — Գրուած են աշակերտաց անունները։

Ս. Ց.

ԱԶԳԱՅԻՆ.

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ.

ՄԱՅՐ ԱԹՈՌ.

ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆՆԵՐ.

— Մայիսի 6-ին Նորին Մեծութեան Նիկոլայ II-ի Ծննդեան տարեդարձին Կայսերական մաղթանք կատարուեցաւ զինի հանդիսաւոր ս. պատարագի։ Մաղթանքին ներկայ էր Նորին Վեհափառութիւնը, Ս. Էջմիածնի ամբողջ միաբանութիւնը, ճեմարանի ուսուցչական խումբն և աշակերտները, գաւառական վարչութեան ներկայացուցիչներն ու խուռն ժողովրդի բազմութիւն։ Մաղթանքից յետոյ Նորին Վեհափառութիւնը շնորհաւորական հեռագրով յայտնեց իւր բարեմաղթութիւնները, որին ի պատասխանի ստացուեցաւ հետեւեալ հեռագիրը.

Երէմ. 6 մայիս, 4 ժամ զինի կիսատուր.

ԷՋՄԻԱԾԻՆ.

ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Յանկեղծ սրտէ շնորհակալ եմ վասն արտայայտեալն ինձ զգացմանց և բարեմաղթութեանց։ Յանձն առնեմ աղօթից Ձերոց զիս և զամենայն ընտանիս իմ։

ՆԻԿՈԼԱՅ

Նորին Վեհափառութեան հեռագիրն էր.

ՄՈՍԿՈՒԱ

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՑՍԵՐ

Ի մեծի աւուրս փառաւոր մտից Ձերդ Կայսերական Մեծութեան ի նախաթոռ մայրաքաղաքն Մոսկուա և Ծննդեան Ձերոյ, Ամենաբարեպաշտ Թագաւոր, աղօթս Ջերմագինս վերառաքեմ ՅԱԹՈՌ Բարձրելոյն վասն բարօրութեան և թանգագին կենաց Ձերոց։

Արժանի արասցէ Տէր զՁերդ Սրբութիւն առատապարգեւ ձրից իւրոց և շնորհաց Սուրբ Հոգւոյն յաւուր յառաջիկայ հանդիսի սրբազան Թագադրութեան յընդերկար և ի բարեբաստիկ Թագաւորութիւն:

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Կայսերական տօնի համար պատրաստուած յատուկ հրավառութիւնը տեղի ունեցաւ երեկոյեան ժամը 7—10 վեհարանի առաջև:

ՍՐԲԱԶԱՆ ԹԱԳԱԴՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆԸ.

— Մայիսի սկզբից արդէն պատրաստութիւններ էին տեսնուում Ս. Էջմիածնում շքով տօնելու Կայսերական Թագադրութեան հանդէսը, Նշանակուած կարգով մայիսի 13-ի երեկոյեան, զկնի ժամերգութեան, Նորին Վեհափառութեան ներկայութեամբ ամբողջ միաբանութիւնը տաճար ժողովուելով՝ հսկումն կատարեց, Յաջորդ օրը վանքի շրջապատն, աւագ դարպասն ու ճեմարանի ճակատը գեղեցիկ զարդարուած էին ռուսական հարիւրաւոր դրօշներով և կանաչ գրասանգներով: Մայր Տաճարում հանդիսաւոր պատարագ մատոյց Գերապատիւ բարձր Սրբազան Սուքիաս արքեպիսկոպոսը, Ս. Պատարագին ներկայ էր Վեհափառ Հայրապետը, բոլոր միաբանութիւնն ու ճեմարանը, իսկ խուռն ժողովրդեան բազմութիւնը լցրել էր Տաճարըն ու բակը, Զկնի ս. Պատարագի ամէնքը սրտատրոփ սպասում էին Մոսկուայից հեռագրի, որ մաղթանքն սկսեն, ժամը 1½-ին Երևանի պ. Նահանգապետի հեռագիրն աւետեց Թագադրութեան յաջող կատարումն. անմիջապէս հնչեցին Ս. Էջմիածնի բոլոր զանգակներն ու ամէնքը ժողովուեցան մաղթանք կատարելու, Մայր Տաճարում մաղթանքն աւարտելուց յետոյ տեղական պաշտօնեայք Վեհափառ Հայրապետի աջն առան և շնորհաւորեցին փառաւոր հանդիսի կատարումն, Ներսիսեան լճակի շուրջը տեղական ազգաբնակութիւնն հաւաքուած էր ոստիկանութեան հրամանաւ. երեք տեղ մաղթանք կատարուեցաւ կրկին, մի տեղ ռուսաց համար, միւս տեղը Վաղարշապատի հայ ծխականների համար, երրորդում մահմեդականների համար,

Մաղթանքից վերջը Նորին Վեհափառութիւնը շնորհաւորական հեռագիր ուղղեց Նորին Մեծութեանց ի Կրեմլ, որին ի պատասխան ստացուեցաւ ամսոյս 31-ին Ներքին Գործոց Տ. Նախարարի №1429 գրութիւնը, մայիսի 22-ից. Տ. Նախարարն յայտնում է Նորին Վեհափառութեան, որ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐԸ հաճել է իր իսկ ձեռքով գրելու Նորին Սրբութեան հեռագրի մասին արած ամենահպատակօրէն զեկուցման վրայ՝ «Ի ՍՐՏԷ ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ»:

Երեկոյեան հրախաղութիւնն ու հրավառութիւնը շատ շքեղ էր, մանաւանդ գեղեցիկ և ճաշակով զարդարուած էին Մայր տաճարի գմբէթները ու Գ. ճեմարանը, Առաջին գիշերը զինուորական երաժշտութիւն էր նուագում վանքի բակում. երկրորդ գիշեր ճեմարանի առաջև. երեք օր շարունակ հրճուում էր ժողովուրդը Վանքի և ճեմարանի բակում և շրջակայքում մինչև կէս գիշեր. խաղաղութեան և աղօթից վայրերը ժողովրդական հրճուանքի վայրերի էին փոխարկուել, Չէին մոռացուած և աղքատներն ու բանդարկեալները. Նորին Վեհափառութեան հրամանով ճաշ տրուեցաւ հարիւրաւոր աղքատներին, հաց, միս և գինի բաժանուեցաւ բանդարկեալներին ու տեղական զինուորներին.

— Ամսոյս 25-ին Մեծափառ Կայսրուհւոյ Ալէքսանդրա Ֆէօդորովնայի տօնի առթիւ հանդիսաւոր պատարագ մատուցուեցաւ Ս. Իջման սեղանի վրայ և ապա կատարուեցաւ Կայսերական մաղթանք ի ներկայութեան Նորին Վեհափառութեան, միաբանութեան, ճեմարանի և ժողովրդականաց, Ի պատասխանի Վեհափառ Կաթուղիկոսի շնորհաւորական հեռագրի՝ նոյն օրն ստացուեցաւ հետևեալ հեռագիրը.

ԷՋՄԻԱԾԻՆ

ՄԿՐՏԻՉ ՊԱՏՐԻԱՐՔ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Շնորհ ունիմ Սրբութեան Ձերում վասն աղօթից և շնորհաւորութեանց Ձերոց և ամենայն աղօթողաց վասն բարօրութեան Մերոյ:

ԱԼԵՔՍԱՆԴՐԱ

Ահա Նորին Վեհափառութեան առաքած հեռագիրն.

ՄՈՍԿՈՒԱ

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ

ԹԱԳՈՒՀԻՈՅ ԿԱՅՍՐՈՒՀԻՈՅ

Ի մեծահանդէս աւուրս ծննդեանն Ձերդ Մեծութեան, ընդ համայն միաբանական ուխտիս Ս. Էջմիածնի, առաջի յոգնախուռն աղօթաւորաց, զկնի ս. պատարագի, կատարեցի գոհացողական մաղթանս վասն բարեբաստութեան և արևշատութեան Ձերդ Մեծու-

թեան և համայն Օգոստափառ Ցանդ։ Առաջի առնելով Ձեզ, Ամենաբարեպաշտ թագուհի, զեռանդագին շնորհաւորութիւնս իմ և համբերն հօտին իմոյ, աղաչեմ զԲարձրեալն, զի շնորհեսցէ բարեբաղդ կեանս երկարս գթառատ Մօրդ բազմարիւր ժողովրդեան մեծին Ռուսիոյ։

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ՏՕՆ ՍՐԲՈՅ ՀՈՒԻՓՍԻՄԵԱՅ, ԳԱՅԱՆԵԱՅ, ՇՈՂԱԿԱԹԻ ԵՒ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.

— Ամսոյս 20—26 հանդիսաւոր տօների օրեր էին Վաղարշապատում. երկուշաբթի տօն էր սուրբ Հռիփսիմէի, ուստի և ուխտաւոր ժողովրդի բազմութիւնն արդէն առաւօտուց գրաւել էր ս. Հռիփսիմէի գեղաշէն ու բարձրագիր վանքի շուրջը։ Ամբողջ միաբանութիւնն շտապում էր այնտեղ ս. պատարագի, որին ներկայ եղաւ և նորին Վեհափառութիւնն։ Վեհափառ Հայրիկը յանձնուն ուրախացրեց ներկաներին իւր հայրապետական քարոզով։

Յաջորդ օրը, երեքշաբթի, տօն էր ս. Գայանեայ, ուստի ուխտաւորներն այդ սրբուհւոյ վանքումն էին խոնուել, ուր հանդիսաւոր պատարագին ներկայ եղաւ նաև Վեհափառ Կաթուղիկոսը։

Հինգշաբթի օրը տօն էր Հողակաթի, որ տեղ ևս ի ներկայութեան մեծ բազմութեան ու միաբանութեան հանդիսաւոր պատարագ մատուցուեցաւ։

Շաբաթ օրը, սրբոյ Հօրն մերոյ Գրիգոր Լուսաւորչի տօնին, արդէն ուխտաւորներ էին եկել և շրջակայքից. յաջորդ օրը մեծ բազմութեամբ ուխտաւորներ ժամանեցին Ս. Էջմիածնի տօնին ներկայ լինելու։ Հանդիսաւոր պատարագից զկնի նշանակուած էր Հայրապետական մաղթանք, սակայն Վեհափառ Կաթուղիկոսի թեթև տկարութեան պատճառով տեղի չունեցաւ այդ։ Միաբանական ճոխ սեղան էր պատրաստուած հարիւրաւոր անձանց համար. սեղանի նախագահ էր Բարձր Սրբազան Սուքիաս արքեպիսկոպոսը, որ և իմաստալից ճառով կենաց բաժակ առաջարկեց Վեհափառ Հայրապետի և հաստատութեան Մայր—Աթոռոյ։ Սեղանի ժամանակ ճառ խօսեց և բարձրապատիւ Կարապետ վարդապետը, որից յետոյ առաջարկեց հանդիսագիր սրբազանը Սիոնի նոր սերնդեան։ Գէորգեան ճեմարանի ուսուցչաց և սաների կենացը։

Երեկոյեան փառաւոր ճրագալոյց և հրավառութիւն կար թէ Վանքում և թէ ճեմարանում, ուր ժողովուրդը մինչև կէս գիշեր զուարճանում էր։

ՊԱՐԳԵՒԱՌԱՔԱԽՕՒԹԻՒՆ.

Ներքին Գործոց Տ. Նախարարը գրութեամբ 17-ն Մայիսի 1896 ամի, հմր. 2843, յանուն Ս. Էջմիածնի Հայոց Սինօդի յայտնում է որ ԹՈՒԳԱՒՈՐ ԿԱՅՍՐԸ ամենաողորմածաբար հաճել է շնորհել զերազանց Ջերմեռանդ ծառայութեան համար. ա, ականակուռ լանջախաչ Ս. Էջմիածնի Սինօդի անդամ Երեմիա արքեպիսկոպոս Գալատեանցին, բ, շքանշաններ Ս. Վլադիմիրի 3-րդ աստիճ. Ասարախանի Հայոց Առաջնորդ Արիստակէս արքեպիսկոպոս Սեղրակեանցին. գ, Ս. Աննայի 2-րդ աստիճ. Մոսկուայի Հայոց հոգևոր Կառավարութեան անդամ Յարութիւն քահանայ Տէր Ղուկասեանցին. դ, նոյն շքանշ. 3-րդ աստիճ. Ս. Պետերբուրգի Հայոց հոգևոր Կառավարութեան անդամ Գէորգ աւագ քահանայ Խանթարջեանցին և ե, Կերչի Կուշնիկովսկի ճեմարանի կրօնուսոյց Օգսենտիոս քահանայ Զուրպայեանցին և զ, Ս. Ստանիսլաւի 3-րդ աստիճ. Քութայիսի ս. Նուենէի օրիորդաց դպրոցի կրօնուսոյց Յովսէփ քահանայ Ամիրաղեանցին։

Գ. ՃԵՄԱՐԱՆ.

Այս տարի Գ. Ճեմարանի մասնագիտական բաժնի Գ. Լսարանից աւարտեցին չորս հոգի. շնորհունակ Մուշեղ սարկաւագ Տէր Գաբրիէլեանց Շուշեցի, Հայկ Յովհաննիսեան Ցղնացի, Վահան Բրժշկեան Դաւրիժեցի և Լուսեղէն Նորարևեան Նոր Նախիջևանցի։ Չորս շրջանաւարտներն ևս ներկայացրին աւարտական շարադրութիւններ աստուածաբանական, եկեղեցական և գրականական նիւթերի վրայ և արժանացան առաջին կարգի մրցանակագրի։

Դպրոցական շրջանի Զ. դասարանից աւարտեցին 16 հոգի, որոնցից ոմանք խնդիր են տուել լսարանները մտնելու համար։

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ.

Մայր Աթոռիս տպարանից լոյս տեսան երեք արտատպութիւններ «Արարատից». 1. Համամ Աբևելցի, Թ. դարու արքայազն բանաստեղծ. 2. Յոհան Օձնեցու ճառն ընդդէմ երկարնակաց և 3. Պատմութիւն Սասանեան տէրութեան։

Մամուլի տակ են և շուտով լոյս կը տեսնեն 1. Առաքել Դաւրիժեցի. Բ. տպագրութիւն, 2. Քռիլովի առակք, թարգմանութիւն Գաբ. արքեպ.

Ա. յվազեանի, հեղինակի և թարգմանչի կենսագրութիւններով և 3. Ընդարձակ սրբազան պատմութիւն Ամբրոսիոս Գալշիայեանի։

ՈՒՍԱՀԱՅՏ.

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄ

— Նորին Վեհափառութիւնը Երևանի թեմական փոխանորդ նշանակեց Գերապատիւ Ներսէս եպիսկոպոս Խուդավերդեանին, որ մայիսի 12-ին մեծ բազմութեան ուղեկցութեամբ Երևան գնաց և ժողովրդի կողմից բուռն ցոյցերով ընդունուեցաւ։

— Գերապատիւ Գրիգոր եպիսկոպոս Աղաֆիրեանը կրկին ուղևորուեցաւ իւր վանքը, Ագուլեաց ս. Թումայ առաքելոյ մենաստանը։

ՇԱՄԱԽՈՒ ԹԵՄ.

ՍԱՂԻԱՆԻ Ս. ՍՏԵՓԱՆՆՈՍ ՎԱՆՔԻ ՄՏԻՑ ԵՒ ԾԱԽՈՒՑ ՀԱՇՎԻՆ 1894 ԹՈՒԻՆ

ՄՈՒՏՔ	Ր.	Կ.
Առ մէկին Յունվարի 1894 ամի չէ մնացեալ վանքապատկան արդեանց գումար ինչ։		
Կապալագրամ վանքապատկան հողոյն Գիւրջիւանու	20	—
Գանձանակագրամ եկեղեցւոյ քաղաքաց թեմիս վասն 1893 ամի . . .	70	23
Ի վաճառմանէ փայտից	3	50
Արդիւնք մասահամբոյր գանձանակաց .	93	26
Ի վաճառմանէ վանքապատկան գինւոյ և օղւոյ 1892 ամի ի ձեռն Ստեփաննոս վարդապետի Տէր Գրիգորեանց Նախկին վանահօր . .	73	—
Ի վաճառմանէ նուիրեալ ցորենոյ ժողովրդոց Արփաւուտ գեղջ . . .	9	—
Ի վաճառմանէ մորթոց մատաղաց . .	7	62
Ի վաճառմանէ միոյ կովու	4	—
Փոխարենաբար պարտ առեալ դրամք .	357	80
Գումար մտից 1894 ամի	638	41

Յորոց ի ձեռն նախորդ վանահայր Ստեփաննոս վարդապետի մուտք եղեալ են 143 ռուբլի 50 կոպ. իսկ ի ձեռն Մակար Ծ. վարդապետի Բարխուդարեանց 494 ռուբլի 21 կոպէկ։

ԾԱԽՔ	Ր.	Կ.
Յաւուրս նախկին վանահօր Ստեփաննոս վարդապետի Տէր Գրիգորեան ի 1-էն Յունվարի 1894 ամի ց 1-ն Ապրիլի նոյն ամի եղեալ են ծախք	143	50
Իսկ յաւուրս Մակար Ծ. վարդապետի Բարխուդարեանց ի 1-ն ապրելի նոյն ամի ցվերջ Դեկտեմբերի 1894 ամի եղեալ են վասն երթևեկութեան ի վանէն ի Շամախի վարձ փոշտի և կառավարաց . .	33	54
Ռոճիկ և հանդերձագին ծառայի . .	31	50
Հանդերձագին տնտեսի	36	66
Բաժանորդագին «Արարատ» ամսագրոյ վասն 1894 ամի	4	—
Ճանապարհածախք քննչի հաշուոց նախկին վանահօր	16	50
Ամենատեսակ ծախք մշակագործութեան այգւոյ վանէն	270	—
Ամենատեսակ ծախք վասն սննդեան վանահօր, տնտեսի և ծառայի—ալիւր, վարձ հացաթուխի, թէյ, շաքար, բրինձ, իւղ, միս, պանիր, վառելափայտ, լուբիա, նաւթ և այլն .	102	71
Գումար ծախուց 1894 ամի	638	41

Յաւուրս վանահայրութեան Մակար Ծ. վարդապետի Բարխուդարեանց մտեալ են ի վանս նուէրք ի զանազան ջերմեռանդ ուխտաւոր յարանց և կանանց 13 հատ մետաքսեայ մեծ և փոքր աւետարանի թաշկինակ, 1 հատ գորգ, 2 հատ ուրար սարկաւագի, 1 հատ սկւոյ ծածկոց, 1 հատ բրդեայ մեծ թաշկինակ, 1 հատ մետաղեայ խնկատուփ, 1 հատ բամբակեայ հիւսկէն սպիտակ երես գրասեղանի, 1 հատ խոզանակ, 3 հատ ապակեայ լամպ, 1 հատ թուջի սաջ, 1 հատ քաթանէ երեսսրբիչ, 1 հատ փայտեայ նոր պահարան, 1 հատ քաղուածք շարականի, 1 հատ ժամաշապիկ, 1 հատ գրքակալի շապիկ, 1 հատ թէյի դրգալ և մի զոյգ աղս փիլոնի, մի ամեայ «Արձագանք», մի ամեայ «Նոր-դար», մի ամեայ «Մշակ»։



ՏԱՃԿԱՀԱՅՔ․

—

ՎԱԽԵՐԱԳՐԵՐ․

1895 *աղէտալի տարին անցաւ՝ բայց այդ աղէտների սոսկալի հետեւանքները դեռ շարունակւում են։ Այդ սեւ տարին պէտք է գտնէ մի սեւ յիշատակարան եւ ունենայ․ ահա այդ սեւ յիշատակարանի նիւթերն են, որ «Արարատը» պարտաւոր է հրատարակել իբրեւ բերան Հայաստանեայց եկեղեցու, որպէս զի գտնէ պատմութեան մէջ անմահանան այն նահատակները, որ իրենց արիւնը չխընայեցին Քրիստոսի անուան համար։ Ցիշատա՛կն արդարոց օրհնութեամբ եղիցի։*

Ա․

ԱՂԹԱՄԱՐԱՑ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԽԱՉԱՏՈՒՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ՎԵՐՋԻՆ ԹՈՒՂԹՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ․

—

*Սիրելի եղբայր ի Քրիստոս․**

Արդ, Սրբազան եղբայր, դուք ես իբրեւ ականատես մի սանդարամետական տեսարանի վկայ էք թէ անհնար է զիրականն պարփակել ի գիր․ ապա ոչ ձանձրանայք յորժամ զփոքրաթիւ օրինակս խժդըժութեանց ի ցուցանել, նախապէս անկանիցիմք ի խորս երկարաբանութեան, գիտելով զի զյոքնածրաբըս թղթից ես լցեալ գրութեամբք չեմք կարող արժանապէս և լիուլի գրել զամենայն, և քանզի ի վերայ այս ամենայն օրհասական տառապանաց իսպառ քանդեցան վանօրայք, պղծեցան Ս. Տաճարք, գերի վարեցան ս. սպասք, դադարեցան պաշտամունք և երկրպագութիւնք և մեծամասնութիւն մնացելոց գիմեաց բռնութեամբ ի կրօնափոխութիւն և հոյակապ իշխանք մատնեցան ի սուր և ի մուրացկանութիւն․ բնձ դժբաղդ և մահամերձ հօրս մնար յողբ և ի կական լալ գառնապէս և զմարգարէին կրկնելով թէ, «Հռաքէլ լայր զորդիս իւր և ոչ կամէր մխիթարել զի ոչ էին», առէք և դուք, ո՛ անմխիթար եղբայր, և եդեալ զցաւս ի վերայ ցաւոց երկաթեայ, պողովատիկ, խաչարարձ ուսովդ բարձէք զվիշտս ազգիս և մատուցէք ուր անկն է, հաւաստի լինելով զի յետագայ ցանկք են գուզնաքեայ նշխարք աղէտիցս, զի գուցէ և արտասուք Ձեր ընդ իմոյս և ընդ անմեղ արեանց բաւ լիցին զգութն Աստուծոյ, և զկարեկցութիւնս մարդասիրացն, զուշն և յուշն նոցին հրաւիրել առ մեզ յապահովութիւն և ի խաղաղութիւն և ի դարմանումն անբուժելի վիրացս որպէս ոչ կրեաց երբէք ազգն մեր յանցելումն, և ո՛չ ոք յազգաց բնաւ, զի որո՞յ ազգի քահանայքն իսկ բռնաբարեցան ի կրօնափոխութիւն ապացուցանելով զնոր դաւանութիւն վատշուէր զազիր մոլեգընութեամբ բազմակնութեան, որո՞յ ազգի եկեղեցիք դարձան այսպէս ստորաթիւ գոլ ժողովատեղի հակակրօնից, և ո՞ր ժողովուրդ ի ձեռն բռնութեան իբրեւ զհեղեղ հոսեալ զեղան յանդունդ պլղդաւանութեան տարտարոսին, հաստատելով զայն ամօթալի ըլկութեամբ զմերձաւոր արիւնակիցսն, զարմանամ թէ զիա՞րդ և ո՞րպէս արեւ և լուսին որ միայն չարչարանաց Քրիստոսի չժուժկալ սքօղեալ խաւարեցան ընդ այս ամօթալի պղծութիւնս, ոչ պատկառեալ իսկ նսեմացան․ պղծութիւնքն ընդոր և սատան հեղինակ մեղաց կարծեմ ամաչեալ և յորջի անդընդոց թագուցեալ ի ծիծաղս քմաց ժպտի յուսահատ․ այլ զի մի ի ցաւս անհնարինս արբեցեալ գոլով լիցի իսկ մեղանչել յանդիման երկնաւորին, հաւատալով որպէս և արդարութեան նորին՝ նոյնպէս և երկայնմտութեան սկսայց զհամառօտ ցանկն գիպաց ի լիուլին թողլով ապագայի զոր գուցէ լոյս ժամանակին հանցէ ի տես, ի լաց հայութեան, և ի նախատինս . . . .

* *Դիմում է Ամենապատիւ Տ. Մատթէոս սրբ. Պատրիարքին*

Սպարկերտ գաւառի սպանութիւնք եւ կրօնափոխութիւնք․

Սոյն գաւառի գիւղերու բնակիչներէն ոմանք սպանուեցան և մնացելոց մեծ մասն կրօնափոխ եղան․ իսկ եկեղեցիք՝ կամ քանդուած կամ ջամի եղած են և գիւղն իսպառ կողոպտեալ,

Անուանք գիւղից․	*Տուն*	*Սպանեալ անձ․*
Սեւ քար	20	15
Ճանժուան	30	25
Կոտենց (Ներքին)	30	11
Ներքան	40	06
Օղանդ	15	05
Հօրուկ	45	20
Կոտենց (վերին)	12	07
Բազենց	20	12
Լուար	15	05
Թաղ	12	05
Գիւղիս	15	07
Տանծիս	40	04
Սօսու	20	15

Անուանք գիւղից	Տուն	Սպանեալ անձ·
Ցարկին	05	05
Դալարս	12	14
Պատրանց	14	06
Հուսպ	18	08
Հօրուկ (ներքին)	12	06
Խութ	10	05
Սօրի	10	05
Բաղտ	60	50 (եւ վառուած)
Սօղանց	18	15
Առնչիկ	20	12
Տուաչս	20	15
Կըռան	10	06
Դաշտ	12	07
Մ'ատ	20	09
Ձմէն	16	08

Բաչենց Ս. Աստուածածնի վանք կողոպտեցին, վանահայր Տ. Կարապետին կրօնափոխ ընելով երկու կին տուած են.

Գեղսու Ս. Կիրակոսի վանք կողոպտեր են, գործակատար Խաչատուրեան Պօղոս սպանած......

Սօրայ Ս. Աստուածածնի վանք կողոպտած ու քանդած են.

Սկավլաւակայ Շիրենց Ս. Գէորգ վանք կողոպտեր են և երեք մարդ սպանելով վանահայր Տ. Յովհաննէս կրօնափոխ ընելով երկու կին տուած են.

Վերոյգրեալ չարիք ըրած են Աղա գիւղի Մահմէն, Սալուայ գիւղացի մոլլա Գասըմ, Բաստ գիւղի Ավդի պէյ, Եղեզանու Հասան, Մուստաֆայ, և Ասատ պէյեր Շէյխ Մուս. Կապարցի Շառօ և Շէվհէ, Ալիշէր, Գէշ գիւղի Փախգայ Մանաս և Կապարցի Ահմետ իրենց հետեւող ժխորով.

Խիզան գաւառի 40 գիւղից 400 անձ սպանուած են Շէյխ Ճէլալէտտինի որդի Սէյիտ Ալիի, Խօրօրոցի Ագէնի, Պէշիրի, Մուստաֆայ պէյի, Մուրատի, Խարիթայ Փագոյ Խալիլի, Խալըտի, և Շամրի հետեւողաց ձեռօք և սոցա եւ ձեռօք ու հրամանաւ. իսկ մնացեալ բնակչաց մեծամասնութիւնը իրենց քահանայիւք կրօնափոխ եղած են. եկեղեցիք քանդուած և ոմանս մզկիթ ըրած են. Իսկ այս գաւառի բոլոր վանքեր կողոպտած և սրբապղծած են.

Ս. Խաչ վանուց վանահայր Սահակ վարդապետ կենդանւոյն տիկ հանած են.

Մամռտանք գաւառակի 20 գիւղից 160 անձ սպանուած են յոյժ չարաչար կերպով. մնացեալք կրօնափոխ եղած են մեծաւ մասամբ. Եկեղեցիք և վանօրայք եւ կողոպտուած, քանդուած և ոմանք մզկիթ եղած են.

1. Սոյն անձ երկու եղբայրներ իրարու վրայ դնելով, ցիցով զամեր է գետին եւ այնպէս սպաններ է։

Վերին Կարկառու տեղեկութիւնք

Անուանք գիւղից	Տուն·	Սպանեալ անձ·
Առղու	12	02
Թացու	45	09
Եղեգիս	60	12
Բերկրի	15	04
Ալքս	08 **	02
Խնձորուտ	25	09
Հարպենց	52	08
Հերքիւրկին	18	14
Ձկոր	15 ***	04
Որեէ	22	04

Վարի Կարկառու տեղեկութիւնք.*

Անուանք գիւղից·	Տուն·	Սպանեալ·
Սմպոն	18	01
Ձախող	06	(կրօնափոխ)
Դօկու	32	" "
Տափ	07	01
Խըռրտենց	27	01
Մղկանց	14	(կողոպտեալ)
Միւլք	05	" "
Կիճի	12	" "
Արկենց	15	" "
Ցաղթ	50	" 05 "

Սոյն գիւղից սպանելոց մէջ կան չորս քահանայք և կրօնափոխից մէջ երեք քահանայք. վանօրայք և եկեղեցիք հրձիգ եղած և քանդուած են, և այս բոլորն ալ կատարուած են Շէյխ Ճէլալետինի որդի Սէյիդ Ալիի և իւր հետեւողաց ձեռօք.

Ռշտունեաց գաւառի տեղեկութիւնք.

Անուանք գիւղից·	Տուն·	Սպանեալ·
Փայխըներ	60	(կողոպտուած բնաւին)
Նարեկ	100	(կողոպտուած) " "
Վերի Սարին	15	(կողոպտուած " "
Ճատուան	20	" " 01
Գանձակ	30	" "
Վասենց	18	" "
Փշավանք	50	" "
Ցիրիճ	20	" " 01
Պատականց	60	" " 1 քահ. 03
Տըշոխ	40	" " 05
Աթանան	55	" " 01
Կարմրակայ վանք	—	" " 01

* Սոյն տասներկուքէն տասն աշխարհական են, իսկ երկուքը քահանայ։ ** Սոյն գիւղի քահանայն եւս կրօնափոխ ըրած են։ *** Սոյն վանուց վանահայր Սարգիս վարդապետի աչքերը փորելով սպանեցին։

* Մինչեւ Վերին Կարկառ Բաղէշու կուսակալութեան ներքեւ է, իսկ Վարի Կարկառէն սկսեալ Վանայ կուսակալութեան ներքեւն է։

Ուշտունեաց գաւառէն Ս. Յակոբայ վանք իսպառ կողոպտեցին։ Սոյն գաւառի բոլոր աւերմունք գործեց Տէրվիշ պէյի տղան Հանրածանօթ ոճրագործ Գոշիխան պէյ իւր արբանեակաք և Ներքին Սարեցի ժանտախտ Մոնլայ Պրայիմ իւրայնաք։ և ոստիկան Ապտիւլ Համիդ ու Ապտըլ Ղաֆուր։

Փեսանղաշտ գաւառակէն.

Անուանք գիւղից.	Տուն.	Կողոպտուած եւ սպանեալ.
Կազաշեղ գիւղ	30	. .
Շետան	60	. . եւ 01
Առեղ	25	. .
Կայնամիրան	15	. .
Գոմեր	40	. .
Տարենց	40	. .
Հառ	25	. .

Կարադէրայ վանք բոլորովին կողոպտուած։

Սոյն գաւառակի աւերմունք գործուեցան Ոստանի քիւրդերու ձեռաք։ Տեչուր գայմագամ Զաբրի պէյի թելադրութեամբ և մասնակցութեամբ և Հաբրի ձեռաք։

Հատախ գաւառ աւանէն ի զատ բոլոր գիւղեր և գիւղակներ բնաւին կողոպտուած են Կրավանցի աշխարհաւեր Հաբրի։ Մահմատի և Կուրթ Պէյի ձեռաք։

Նորտուզ գաւառի բոլոր գիւղեր յորս նաև Հոգեաց վանք իսպառ սպուռ կողոպտուած են Կրավանցի Հաբրի և իւրեանց ձեռաք և այժմ կրօնափոխութեան կամ սրոյ պիտի մատնուեն անպատճառ բոլոր նոյն գիւղերու մերկ ու քաղցած բնակիչք։

Հայոց Զորոյ գիւղերու տեղեկութիւնք.

Գիւղք.	Տունք.	Սպանեալք.
Խարկանց	30	
Խորգոմ	40	
Քոշկ	30	
Իշխանիգոմ	40	
Մարկս	20	
Նլթենց	30	
Քեռց	80	02
Մաշտակ	30	
Միւլք	05	
Անգղ	60	
Կեմ	100	
Գըզլթաշ	20	05
Խոսփ	25	
Պըժընկերտ	10	
Նոգի	30	05
Ոչխարանց	04	
Աստուածաշէն	30	01
Արատենց	35	
Էրմէրու	70	02
Անկշտանց	60	
Խէք	25	
Հընոտան	35	
Հերթիկ	70	04
Ճոեզ	15	
Տոնի	30	

ՎԱՆՕՐԱՑՔ.

Զարահան Ս. Նշանայ վանք.
Սպիտակ Ս. Աստուածածնայ վանք.
Անգղայ « « »
Սրխու վանք.
Էրմերուայ Ս. Աստուածածին »
Խէքայ Ս. Գէորգայ »

Սոյն Հայոց Զորոյ գաւառի յիշեալ սպանութիւններէն ի զատ նշանակեալ բոլոր գիւղեր և տներ բոլորովին կողոպտուած են։ Նոյնպէս վանքեր Հաբրի։ Թէյֆուրի։ Ոստանցւոց և Արդամերտցոց ձեռաք։

Հայոց Զորոյ գաւառին կը վերաբերեն նաև Ս. Վարդան գիւղ։ բոլորովին կողոպտեալ։ Արդամերտ։ Խուրստան։ Բիրդաք և Կենդանանց գիւղեր։ որք նոյնպէս անմասն չեն մնացած կողոպտուելու։ քանդուելու դժբախտութենէն։

Կարճկան գաւառի գիւղերու տեղեկութիւնք.

Գիւղք.	Տունք.	Սպանեալք.
Պաշուանք	25	6 մարդ կորսուած
Խնձորկեն	50	4 . .
Ծափոր	18	4 կին առեւանգած
Կառուվանիր	15	01
Ուսունց	40	կրօնափոխ
Խարբեթ	30	01
Սուրբ	62	02
Օղվանց	60	
Վանիկ	35	
Կենդրանց	55	
Փեկանց	40	կրօնափոխ
Էղեգես	90	
Գոմս	40	
Մրորս	40	4 կին առեւանգեալ
Կանտու	15	03
Փրխուս	20	03
Կութ	60	
Ստուս	14	
Զընտան	12	2 կին առեւանգեալ
Ուրանց	110	01
Կանճառս	20	
Խումս	35	
Կառփ	25	
Սմպոն	կրօնափոխ	քահանայիւ
Հանեկանց	15	
Ուրէնտուս	28	
Առանց գիւղ	25	

ՎԱՆՕՐԱՅՔ.

Ուրանից Ս. Աստուածածին վանք․
Մրորսայ Ս. Թովմաս »
Գոմոց Ս. Գէորգ »
Կենդրանից
Սորփայ Ս. Կարապետ »
Սմբատաշէն Ս. Աստուածածին »

Սոյն Կարճկան գաւառի բոլոր գիւղերու գիմաց նշանակեալ մասնաւոր կորուստներէն, կրօնափոխութիւններէն և առևանգութիւններէն ու սպանութիւններէն ի զատ, թէ այնտեսակ հարուածակիր և թէ բոլոր միւս գիւղօրայք անխնայ կողոպտուած են ըստ ամենայնի և բնաւին թափուր յամէն պիտոյից։ Յոյժ ցաւալի է Սորփայ վանուց վանահայր Պետրոս վարդապետի յօշակոտոր սպանութիւն, նախ լեզուն և ապա զայլ անդամս հատանելով։

Սոյն գաւառի աւերիչք են Մուսայ պէյ, Փօշայու Ամար աղան, Հասըր, Գասըմ, Թաժօ, Եագուպ, Քեալաշ, Խըլֆ, Հընձանցի Ալի աղայի տըղան, Ավօ, Խալըտ, Ատօ աղայք իւրեանց արբանեակօք։

Մոկս գաւառի բոլոր գիւղեր ևս չարաչար կողոպտեալ են․ Ողիմ և Տըն բազմամարդ գիւղեր ևս բ ո լ ո ր ո վ ի ն կողոպտեալ են իւրենց շրջակայ աղաներէն։

Իսկ Պօհտան և այլ գաւառներ այնպէս անլըսելի կերպով քանդուած ու աւերուած են, յորոց չունիմք մանրամասն տեղեկութիւնք, ինչպէս նաև հոս նշանակեալ այլ և այլ գաւառներէն չկրցանք ունենալ մանրամասն պատմութիւններ․ հաղորդակցութիւնք գրեթէ իսպառ ընդհատուած լինելուն, սոյն փշրանքներ ճշմարիտ աղբիւրներէ առած ենք, մազապուր զերծեալ փախստականներէ ստուգելով, որք ականատես են եղած փախչելէ յառաջ, իսկ յետոյ եղածներն դեռ են ի մթան։

Սրբազան եղբա՛յր․ գիտեմք ապաքէն թէ յայլ տեղեաց ևս առաւել ծանրագոյն լուրք համապաղօրեայ գուժկանօք բեռնաւորեալ են զՁեզ, և մերով փորձառութեամբ գիտեմք թէ քանի՜ դառն են լսել, մանաւանդ տեսանել զահեղ և զանդիմադրելի հարուածս Համայն Ազգութեան, որ անօրինօք և խայտառակ պժգալի կատաղութեանց նշաւակ, ոչ ի փախուստ զօրեն դիմել և ո՛չ ի պաշտպանութիւն կարեն ամրանալ, դառնագոյն ևս են տագնապք, զոր զգամք հարկաւ ընդ արտասուելի աղերսանս հազարաւոր աղերսարկուած զրկեալ խաժամուժին, որք արդարև կենդանի նահատակ իւրեանց ս. կրօնի թալկադէմ, մերկանդամ խռնեն ի դրունս պաշտօնատեղեաց դարման պաղատել անբուժելի վիրացն։ Իսկ մեք ընդ նոսին հարուածեալքս զի՞նչ արասցուք, զմերկս զգեցուսցուք, զսովեալս կերակրեսցուք, զանհամար անպատսպարս հիւրընկալցուք, զկորուսեալս գտցուք, զմեռեալս և զվիրաւորս բժշկեսցուք, զարտասուս սրբեսցուք, զառևանգեալ օրիորդս ի գիրկս մօրն, զհարսն յառագաստն, զերիտասարդն առ սիրելիս, զմայրն ի սնարս օրօրանին դարձուսցուք, զքանդեալ եկեղեցի՞ս վերականգնեսցուք, զպղծեա՞լս սրբեսցուք, զաւարեալ Ս. Սպա՞ս յետս առցուք, ի ժանիս վիշապին ծասքեալ և ի հօտէն Քրիստոսի ընդ քարշս ի տարտարոս կրօնափոխութեան շղթայակապեալս վերստին ի փարախ Փրկչին հրաւիրեսցուք․ զաւերեալ քաղա՞քս և զգիւղըս շինեսցուք, զդատարկ կրպակս և զամբա՞րս լըցցուք, զգոմն և զախո՞ռն անդրէն խայտացող գառամբք և լծքաշ եզամբք լցցուք, զգաղթեա՞լս կոչեսցուք․ թէ զյուսահատ մնացորդս յուսադրեալ և որ մեծն է քան զամենեսին ապահովութիւն խոստացեալ յաւերակսն տեղաւորեսցուք, մինչ սուր բռնակալացն դեռ շօշայ զգլխովք Հայութեան, և հուր ծախիչ դեռ ծախէ, ճարակէ զշէն և զանշէնն։

Արդ, մինչ յայսպիսի անհնարին դժուարութիւնս պաշարեալ կենդանոյն ի մահ մատնեալ վարանիմք զի՞նչ գոյ մեզ առնել բայց եթէ զԴանիէլեան նորոգելով զաղօթս ուղղեալ զդէմս ի վերինն Սիոն և ի Տաճար անձեռագործ պաղատեսցուք զփրկութիւն հօտիս և մանաւանդ ինձ որ ի տես և ի լուր այսց արհաւրաց նետախոցեալ կամ մնամ վաղահաս մահուանս որ ահա կայ առ դուրս զինեալ անբուժելի հիւանդութեամբ, յորում ահա տառապիմ իսկապէս և ընդ հեծութեան արտասուաց զայս ողբս սիրելութեանցդ առաքեմք ահա զի գիտասջիք և յինէն զոր արդէն գիտէքդ․ թէպէտ և չունիցիք պէտս իսկ, այլ կացցէ որպէս և գիտեմ հաւաստեաւ իբր վերջին աւանդ մտերմութեանս, և յորժամ լիցի ինձ հեռանալ յաստեացս և անեղծին ժամանել կենաց կայցեմ անդէն կենդանի բողոքարկու վշտացս հօտիս առ Այն որ սփոփանօք խոստանայ զվրէժխնդրութիւն և դուք դեռ յայսմ աշխարհիս պաղատիցէք ուր արժանն է. գուցէ ողորմութիւն նախախնամողին շնորհեսցէ օժանդակութեան կամս։

Ո՛չ առաւել ինչ է ծանուցանել Սրբազնութեան Ձերում թէ վեցնիցս հեռագրեցաք Բարձր. Եպարքոսի և նոյն իսկ Օգոստափառ Կայսրութեան, ցուցանելով զաւեր աշխարհիս որ ի սուղ ժամանակի իբր յեօթնեկի միում դարձաւ քար ու քանդ,

այլ աւաղ զի ձայն հառաչանացս երբէք չեղեն լսելի։ Արդ, գիտեմք և հաւատամք թէ և Սրբազնութիւն Ձեր բազմիցս թախանձեալ էք զՆորին Կայսերական Գահն, այլ ոչ աւելորդ ինչ է միանգամ և եթ զայս ներկայացնել զի և մեր պարտիք լրացեալ համարեսցին։ Իբրև վերջին հառաչ ողբոց։ ահա հանդերձեալ եմ՝ ելանել եւ անդ մաղթել Ձեզ զօրութիւն եւ կարողութիւն լինել նեցուկ վաստակաբեկ հօտիդ՝ որոյ բարելաւութեան եւ ձերդ Սրբազնութեան եմ՝

յաւէտ Աղօթարար
ԽԱՉԱՏՈՒՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՏԱՆՆ ԱՂԹԱՄԱՐԱՑ

1895 Դեկտ. 19
Ի ՎԱՆ։

Երուսաղեմայ Պատրիարք Ամեն. Տ. Յարութիւն Ս. Հայրն՝ որոշմամբ Տնօրէն ժողովոյ ի Կ. Պոլիս վախճանեալ Տ. Սիմէոն Սրբազանի տեղ Երուսաղեմայ պատրիարքական Փոխանորդ կարգեց Երեցեան Գեր. Տ. Գէորգ Ծ. վարդապետն, որ՝ ինչպէս յայտնի է՝ ժամանակէ հետէ վախճանեալ Սրբազանին քով կը գտնուէր իբրև օգնական, և ամենայն յաջողակութեամբ կօժանդակէր։ Նորին Ամենապատուութիւնն այս առթիւ կարողութիւն, յաջողութիւն ու համբերութիւն մաղթելով Գեր. Երեցեանի հրամայած է բանալ վախճանեալ Սրբազանին թուղթերն և մի առ մի արձանագրել։ Փոխանորդութեան վերաբերեալ պաշտօնական թուղթերն, որ ուղղեալ են Բ. Դրան և Պատրիարքարանի առաջիկայ շաբաթու մէջ կը հասնին։ Անտարակոյս եմք թէ՝ այս ընտրութիւնն, իբրև արժանաւորագոյն, ինչպէս մեզ նոյնպէս ամէն անոնց, որ զԳեր. Երեցեան տեսած և նորա գործունէութիւնն՝ հանճարեղութիւնն ու խոհականութիւնն ճանչցած են, գոհութեամբ մեծաւ պիտի լսեն և սիրով ու հաճութեամբ շնորհաւորեն։

— Թոգատի վիճակի առաջնորդական Տեղապահ կարգեցաւ Յովհաննէս վարդապետ Հուրիկեան, որ անցեալ տարի հռոմէական դաւանութենէ ի Հայ դարձած, Կեսարիոյ վանքը ղրկուած, և քանի մը շաբաթ յառաջ անտի մայրաքաղաքս եկած է։

— Քէօթահիոյ առաջնորդ Գեր. Տ. Պօղոս վարդապետ Խօլտամեան հրաժարեր ու մեկներ է։

— Գեր. Տ. Գրիգորիս Արքեպիսկոպոս Յովհաննէսեան՝ որ Սսոյ կաթուղիկոսական ընտրութեան վերակացութեան պաշտօնով տարիի մը չափ ժամանակ յԱտանա մնալէ ետքը Երուսաղէմ գնացած էր Յարութեան տօնէ յառաջ, չորեքշաբթի մայրաքաղաքս վերադարձաւ։ Նորին Գերապատուութիւնն պիտի շարունակէ Գուրուչէշմէի եկեղեցւոյ քարոզչութեան պաշտօնը։

— Պատրիարքարանի կողմանէ պատրիարքական Գեր. փոխանորդն և Քէչէկեան Տիրան Էֆէնտի անցեալ կիւրակէ պարսկական դեսպանատունը գնացին ի ցաւակցութիւն, և երեքշաբթի հելլենական դեսպանատունն ի շնորհաւորութիւն տարեդարձի անուան Գէորգ թագաւորի։

— Մարաշի Հայոց հովիւ կարգեցաւ Տ. Ներսէս վարդապետ Դանիէլեան, որ յԱղեքսանդրիա կը գտնուի, և գրուեցաւ իրեն որ ուղևորի ի պաշտօնավայրն։

Փունջ։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ։

ԲԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Կոնդակ յանուն Գրիգոր քահանայի Տ. Գրիգորեան միաբանի եկեղեցւոյն Հայոց Ս. Պետերբուրգի հմբ. 410, որով շնորհեցաւ նմա իրաւունս կրել զանջխաչ քահանայական։

Կոնդակ հոգաբարձական հաստատութեան եկեղեցական ծխական դպրոցին Ղալթը գեղջ Նոր Նախիջևանի հմբ. 445։

Կոնդակ հոգաբարձական հաստատութեան եկեղեցական ծխական դպրոցին Հին Ղրիմ քաղաքի, հմբ. 446։

Կոնդակ հոգաբարձական հաստատութեան եկեղեցական—ծխական դպրոցի Կերչ քաղաքի հմբ. 447։

Կոնդակ հոգաբարձական հաստատութեան եկեղեցական—ծխական դպրոցին Օդեսայ քաղաքի հմբ. 448։

Կոնդակ յանուն Ս. Սինօդի հմբ. 483, որով յայտնեցաւ զկարգմանէ Տ. Սարգիս վարդապետի Փիլոյեան ի վանահայր անապատին Սևանայ։